ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/160

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երեք բռունցք» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Հարությունյանի (պետական ռեգիստրի գրանցման համար՝ 271.110.02406),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2022թ. թիվ 26/26-1/7133-2022 գրությամբ «Երեք բռունցք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 15.04.2022թ. թիվ ԳՍ//9541-2022 գրության հիման վրա, 22.04.2022թ. թիվ 26/26-1/7133-2022 գրությամբ նախաձեռնել է «Երեք բռունցք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Երեք բռունցք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երեք բռունցք» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.05.2022թ. թիվ 66/01-69 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից, Հրազդանի (Նոր հաճն) և Քասախ (Աշտարակ) գետերի կամուրջների, Նալբանդի և Պուշկինի թունելների սպասարկման համար հայտարարված (24.11.2121թ.) մրցույթի և հետագա ընթացքի վերաբերյալ մեր առարկությունները:

Հայտերի ընդունումն ու մասնակիցների իրազեկումը կատարվեց 09.12.21թ-ին: Ըստ այդ էլեկտրոնային հայտարարության տվյալների, վկայակոչված երկու կամուրջների II և III չափաբաժիններում միայն մեր ընկերությունն էր առաջարկներ ներկայացրել, իսկ նշված թունելների II և III չափաբաժիններում երեք և յոթ մրցակիցներ էին: Երկրորդ չափաբաժնում (Նալբանդի թունել) ամենացածր գնային առաջարկը (41.640,000 դր) մերն էր: Երրորդ չափաբաժնում մեր գնային առաջարկը՝ 47.100,000 դրամը երկրորդն էր, առաջինը 39.000.000 դրամ էր: Մյուս հինգ առաջարկներից երկուսինը 120 մլն և 150 էին, իսկ երեքինը 180 միլիոն դրամներ էին:

Մրցույթային հանձնաժողովի նիստը կայացավ 17.12.21թ-ին:

Շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի, 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն, նաև փորձառություն չունեցող հայտատուները չպետք է իրազեկվեին և, դուրս պետք է թողնեին մրցույթից:

Հանձնաժողովը չկիրառեց նաև օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը՝ բավարար գնահատված հայտ ներկայացրածների թվից նվազագույն գնային առաջարկով հանդես եկած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով առաջնորդվելու պահանջը:

Անտեսվեց և օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը՝ պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են: Հանձնաժողովը ոչ միայն թույլ տվեց աստղաբաշական գների (120-ից 180 միլիոն դրամ) առաջարկ ներկայացնողներին մասնակցել նիստին, այլև անարգել սկսեցին գնային իջեցումներ անել ոչ թե իրենց թվերից, այլ աննախադեպ իջեցնում էին նվազագույն գներ ներկայացնողների թվերը: Ընդհուպ

ամենացածր գին (39 մլն. դր.) առաջարկ ունեցողը հրաժարվեց շարունակել, իսկ երկրորդ ցուցանիշով հանդես եկողին հասցրին անիրական ցածր ցուցանիշի ու քմծիծաղով հրաժարվեցին շարունակել: Արդյունքում, հանձնաժողովը չխորանալով երևույթների լրջության մեջ, փաստը այդպես էլ արձանագրեց:

Բայց չէ՞ որ դեպարտամենտը անվերապահորեն պետք է ունենար կառույցների սպասարկման նախնական նախահաշվային գները, որոնք և հիմք պետք է ծառաեին հանձնաժողովի ընթացիկ գործունեության համար: Այլապես լռելյայն համաձայնությամբ չէր պարտադրվի, նախորդող տասնամյակների համեմատ 25-30%-ով պակաս հատկացումներով թունելների շահագործումն իրականացնելու հեռանկար: Այն էլ այն պարագայում, երբ երկու թունելների կապիտալ վերանորոգումների նորմատիվային ժամանակահատվածը՝ 15 տարին վաղուց շրջանցվել են:

Անպատասխանատվության մի դրվագն էլ այն էր, որ հանձնաժողովի չհիմնավորված բացատրությամբ՝ թե քանի որ մեզ հետ վերջին «առևտուր» անողը ավելացված արժեքի հարկ չվճարող է, ուստի Նալբանդի թունելի «ջախջախված» թվի վրա ավելացված արժեքի հարկի տոկոսը (20%) չի գումարվելու: Այդպես էլ չպարզաբանվեց, ո՞ր օրենքի հիմքով: Չնդունելով մեր առարկությունները առաջացած թիվը ընդգրկեցին պայմանագրի մեջ, հաշվի չառնելով, որ նախկին տարիներին նշված թունելը սպասարկվել է ավելի բարձր (32 մլն) գնով:

26.12.21թ-ին երկու թունելներինը համատեղված և կամուրջները ևս համատեղված պայմանագրերի տեքստերը մեզ հրամայվեց ստորագրման: Թե ինչու՞ համատեղված անբացատրելի մնաց: Սակայն ամիսներ հետո պայմանագրերի լուծման հետագա գործնթացը նախաձեռնելիս, պատվիրատուն այդ ձևը բարեհաջող ծառայեցրեց իր հեռահար նպատակները իրականացնելիս:

Սահմանված ժամկետում նշված երկու պայմանագրերը, որակավորման և պայմանագրերի ապահովումները տուգանքի ձևով, ստորագրված ու կնքված հանձնեցինք ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարին:

Պայմանագրերի ժամանակին ընթացքի մեջ դնելը մեզ մոտ համոզմունք առաջացրեց որ պատվիրատուն արդեն լուծել է 2022 թվականին կառույցների ֆինանսավորման խնդիրները:

Այդ հիմքով, նոր տարվա աշխատանքային առաջին օրը՝ 04.01.2022թ-ին ընկերությունում աշխատանքի հրամանագրվեցին չորս կառույցների բոլոր աշխատակիցները:

Նույն մոտեցմամբ էլ, ընթացքում պայմանագրեր կնքեցինք տարածքային չորս էլեկտրոցանցերի հետ: Եվ շարունակվեցին կառույցներում աշխատանքների իրականացման բնականոն ընթացքը:

Հարկ է արձանագրել նաև չպատճառաբանված այն քայլերը, որ պատվիրատուն անտեսելով ու շրջանցելով օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 15-րդ հոդվածի 7-րդ կետի և 36-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, երկու կամուրջների համատեղված պայմանագրի օրնակը 31.12.21թ. հաստատմամբ մեզ հանձնեց 24.01.22թ-ին, իսկ թունելների համատեղված պայմանագիրը մեկ ու կես ամիս ուշացումով՝ 09.02.22թ-ին այդ նույն օրվա հաստատումով:

Ի՞նչ պատճառով, կամ ի՞նչ նպատակ էր հետապնդել այս մոտեցումը, այդպես էլ ոչ մի բացատրություն չհետևեց, մեզ թողնելով անորոշության մեջ, թե ինչու՞ է օրենքով նախատեսված 10+4 օրյա անգործության ժամկետը այդքան երկարաձգվել, որի ընթացքում պետք է պայմանագրերը դրվեին ընթացքի մեջ:

Այսպիսի մոտեցումներով, առանց որևէ մեկնաբանության պատվիրատուից մինչ օրս չենք ստացել, ոչ աշխատանքների ընդունման-հանձման ամսեկան ակտերը, ոչ էլ հարկային հաշիվները: Չնայած ճիշտ ժամանակին այդ փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով իրենց փոխանցել ենք: Անտեսվել են պայմանագրի 3.1 և 3.2 կետերի պահանջները, որ յոթ աշխատանքային օրվա ընթացքում կատարողականները պատվիրատուն ստորագրում ու վերադարձնում է կապալառուին, կամ մերժում է: Ոչ մի կրկնօրինակ մեզ չի հրամցվել:

Չտեղեկացնելով ու չմեկնաբանելով այս ամենը, միաժամանակ որևէ քայլ չձեռնարկեցին, անցած ամիսների մեր կատարած աշխատանքների դիմաց ֆինանսական վճարումները կատարելու ուղղությամբ: Չէ որ ամենից առաջին հերթին տուժում են ամիսներ շարունակ աշխատավարձ չստացող աշխատակիցների ընտանիքները:

Չի բացառվում, որ նման վարվելաձևի արդյունքում աշխատակիցների, ենթակապալառուների, հարկային համակարգի հանդեպ պարտավորությունների կատարման ձգձգումները կհանգեցնեն նկատելի քանակի տույժ-տուգանքների առաջացմանը:

Անտեսելով օրենքի 50-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթները, որ պատվիրատուն պատասխանատվություն է կրում պատճառված վնասի փոխհատուցման համար, դեպարտամենտը այս հարցը ևս շրջանցեց:

Առաջնորդվելով պայմանագրի 7.13 կետով, որ ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, ընթացիկ տարվա ամբողջ մարտ ամսվա ընթացքում դիմում էի դեպարտամենտի պետի հետ հանդիպելու նպատակով, բայց այդպես էլ խնդրանքս չիրականացավ: Ում հետ, եթե մրցույթում չորս ստրատեգիական կարևորագույն կառույցների հաղթողի հետ չգտան հանդիպելու ժամանակ և անհրաժեշտություն:

Նպատակս էր առաջին հերթին առանձնակի տրամադրվածություն ստեղծել նշված կառույցների նկատմամբ: Հարկ էր դեպարտամենտի ղեկավարությանը հրավիրել այցելությունների, որպեսզի համեմատության միջոցով ընկալեին Նալբանդի ու Պուշկինի թունելների փաստացի իրավիճակները: Այնուհետև հանգել վճռորոշ որոշումների: Ֆինանսավորումը արագացնելու, քանի որ Պուշկինի թունելը վթարային վիճակում է : Այսօր արդեն մասնագիտական լուրջ միջամտության կարիք ունի: Ցանկություն կար տեղում ուշադրություն հրավիրել, որ թունելի երեսարկը ամբողջությամբ ջրհագեցած է և քչերին է հայտնի, որ կա մի որոշակի հատված, որտեղ ջուրը պողպատյա ամրանացանցի նկատմամբ գերակտիվ է և կանխարգելելու հրատապ խնդիր ունի:

Պետք էր նաև ֆինանսավորմամբ կանգնեցնել շաբաթներով հոսանքազրկումները: Այս խնդրի մասին իմ գրավոր հարցմանն անգամ, դեպարտամենտի պետը չարձագանքեց:

Այսպիսի իրավիճակների, շարունակական անորոշությունների մեջ պարփակված, 13.04.22թ-ին ստացանք նախարարության գլխավոր քարտուղարի՝ Ա. Երիցյանի նամակը, որով հայտնի դարձավ, ինչ-որ փաստաթղթեր ժամանակին չներկայացնելու հիմքով, թունելների համատեղված պայմանագիրը լուծում է:

17.04.22թ-ի պատասխան նամակով, որը հասցեատերը ստացել է 19.04.22-ին, ներկայացրել էինք մեր հիմնավորումները, վկայակոչելով ՀՀ կառավարության 04.05.17թ-ի № 526-ն որոշումը, հիշեցնելով այն ցուցման մասին, որ բանկային երաշխիքի պահանջ առաջանում է միայն 25 միլիոն դրամից բարձր գնահատում ստացած կառույցների համար, իսկ համատեղված պայմանագրում այդպիսին չէր Նալբանդի թունելի գնահատումը (23,9 մլն), որը պարզ է, որ չպետք է ընդգրկվեր լուծման ցանկում:

Նախ նշեմ, մրցույթում շահած մեր մյուս երեք կառույցները բանկային երաշխիքի կարիքը չունեին, բացի Պուշկինի թունելի համար պահանջվողից, որը մեր ընկերությանը սպասարկող «Ինեկոբանկը» չհիմնավորված մերժեց, իսկ «Ամերիաբանկում» դրական ընթացքի մասին, գլխավոր քարտուղարին պատասխանելիս նշվել էր:

Չներկայացված այլ փաստաթղթերի մասին խոսք լինել չէր կարող, քանի որ այլ պարագայում, իրենք կառույցների պայմանագրերը չէին ստորագրի ու հանձնի մեզ:

Անակնկալը չուշացավ: 22.04.22թ-ին ստանում ենք ՀՀ ֆինանսների նախարարության ծանուցումը, որին կցված էր ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի բլանկի վրա, գնումների համակարգման վարչության պետի՝ Վ. Տերտերյանի ստորագրությամբ նամակը, որում արդեն նշված էին և թունելների և կամուրջների պայմանագրերը լուծելու, ինչպես նաև լրացուցիչ, ծայրահեղ չկամությամբ պահանջը՝ ընկերությանը զրկել գնումների գործնթացին մասնակցելու իրավունքից:

Տարակուսելի է, որ նախարարության երկու ստորաբաժանումները, նույն ընթացակարգի վերաբերյալ, չփոխհամաձայնեցված քայլեր են ձեռնարկում: Առաջինը չհիմնավորված, լուծման ցանկում վկայակոչում է և Նալբանդի թունելը, իսկ երկրորդը նաև երկու կամուրջները, որոնց գնային ցուցանիշները վկայակոչված որոշման պահանջից ցածր են:

Այսպիսի գործելաոճը, լուրջ մեկնաբանության կարիք ունի:Միաժամանակ մեր այն հարցադրմանը՝ եթե կային և չներկայացված այլ փաստաթղթեր, որոնց մասին պատվիրատուի նամակներում այդպես թմբկահարվում են, արդյոք անցած երեք և ավելի ամսիների ընթացքում հնարավոր չէր կապալառուին հրավիրել և դեպարտամենտում ստանալ պակաս փաստաթղթերի հաստատումը: Ինչպես վարվեցին պայմանագրերի կնքման ներկայացնելու ժամանակ և չգնահատեցին որպես միայն կապալառուի անպատասխանատվության ու անպարտաճանության արդյունք, հանգեցնելով նման անբարյացակամ ելքերի:

Արդյոք երբևէ իրենց մոտ հարց չառաջացավ, թե այդ ամիսներին ուր էր և ինչով էր զբաղված դեպարտամենտի գնումների համակարգողը, որը օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն պետք է համակարգեր նաև փաստաթղթաշրջանառությունը: Գործավարության նման դրվածք երբևէ դեպարտամենտում չի գործել:

Նույնիսկ դեպքեր եղան, երբ մուտքի անցաթուղթ ստորագրողի բացակայության պատճառաբանությամբ, մեզ ուղարկում էին նախարարությունների նախասրահի պատուհանում փաստաթղթերը հանձնել, որտեղ էլ չստանալով հանձնումը փաստող որևէ նշում, այսօր ի վիճակի չենք ներկայացնել փաստացի ապացույցներ:

Այսինքն պետք է արձանագրել, որ ինքնահոսի մատնելով ոչ մեծ ծավալ ու էներգիա պահանջող գործառույթը, ինչպիսի հետևանքների հանգեցրին, ամբողջ մեղքը բարդելով այդ ոլորտում ՀՀ Տրանսպորտի նախարարության համապատասխան վարչության հետ, տասնամյակների փորձով, հաջողությամբ աշխատած կապալառուին:

Պատվիրատուի բազմաթիվ անտարբերությունների, բացթողումների, ձգձգումների ֆոնին, արդյոք մեր այդքան «ծանր հետևանքներ ու ձախողումներ» բերած քայլերին, առօրյա շրջահայացությամբ վարվելը համարժեք չէր լինի, որ որոշվեց ծայրահեղության տանել, այն էլ օրենքների ու որոշումների այդ չափ անտեսումով ու շրջանցումով: Միգուցե ասպետություն հանդես բերվի ու ուղիղ ասվի հիմնական պատճառը:

Միայն մեր ընկերությանն առնչվող, վերը թվարկված գործառույթներում, պատվիրատուն թույլ է տվել խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ութը՝ 6-րդ, 10-րդ, 15-րդ, 16-րդ, 34-րդ, 36-րդ 38-րդ, 50-րդ հոդվածների, բազմաթիվ ենթակետերի դրույթները, ՀՀ կառավարության 04.05.17թ-ի 526-ն որոշման պահանջները, շրջանցվել են երկկողմանի ստորագրված պայմանագրի 3.1 և 3.2 հոդավծները:

Եվ այս ամենի մեջ ամենաանտրամաբանականը, այն է, որ անտեսելով կամ գիտակցաբար շրջանցելով նշված բոլոր անօրնականություններն ու օրենքները, նույնիսկ չսպասելով ՀՀ ֆինանսների նախարարությունից իրենց իսկ դիմումի արդյունքին, պատվիրատուն կամուրջների սպասարկման նոր մրցույթ է հայտարարում ու սրընթաց կարգով նոր հաղթող ընտրում: Իսկ թունելների շահագործումը մեկ ակտի ստորագրմամբ, առանց մրցույթի, առանձնակի շահագրգռվածությամբ, անտեսելով այդքան շահարկված բանկային երաշխիքի ներկայացման փաստը, հանձնում է նախկին շահագործող «Վարմաշ» ընկերությանը, որը անցյալ (09.11.212.) մրցույթին «աստղաբաշխականների» ցանկում 120 մլն դրամ առաջարկով էր ներկայացել: Կտեղավորվեն արդյո՞ք, հետո շրջանառված թվերի միջակայքում:

Նման որոշումները ինչ կերպ կբնութագրվի գնումների գործնթացը համակարգողների կողմից, ենթադրելի է:

ՀՀ կառավարության համակարգում այսպիսի երևույթները աննախադեպ են:

Հարգելի պարոն՝ Ներսիսյան, խնդրում եմ կանգնեցնել անօրինակությունների այս շղթան և հնարավորություն ընձեռել, ավելի քան քսան տարի տրանսպորտային ենթակառուցվածքների սպասարկմամբ զբաղված ընկերությանը, շարունակելու ձեռք բերված հմտությունների կիրառումը»:

Այնուհետև՝ 11.06.2022թ., Ընկերությունը թիվ 70/01-73 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ընթացիկ տարվա առաջին չորս ու կես ամիսների ընթացքում, հիմք ընդունելով մեր հետ կնքված պայմանագրային (կցվում է) պարտավորությունները, կառույցների անձնակազմերը բարեխղճորեն իրականացրել են: Այդ հիմքով մեր կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել են ամենամսյա կատարողականները: Պատվիրատուից առանց որևէ մեկնաբանության, մինչ օրս չենք ստացել աշխատանքների ընդունման-հանձնման ամսեկան ակտերը, այնպես էլ հարկային հաշիվները (կցվում են):

Ոչ մի քայլ չի արվել կատարված աշխատանքների դիմաց ֆինանսական վճարումների հարցում: Արդյունքում իրենց հասանելիքը չեն ստացել աշխատակիցները, ենթակապալառուները, ինչպես նաև հարկային համակարգը:

Արդյո՞ք պատվիրատուին չի մտահոգում կառույցների 38 աշխատակիցների ընտանիքների վիճակը: Ամբողջությամբ անտեսվել է առաջացող տույժ-տուգանքների խնդիրը:

Հարգելի պարոն Ներսիսյան, ակնկալում եմ ձեր գործուն միջամտությունը, դեպարտամենտի բացարձակ չհիմնավորված գործելաոճի կանխման նկատմամբ»:

«Երեք բռունցք» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/160 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2022թ. թիվ ԳՍ//9541-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 09. 02. 2022 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով

թունելների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ և 30.12.2021 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով կամուրջների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որոնց շրջանակներում Կատարողի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով Պայմանագրի 7.16 և «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով Պայմանագրի 7.14 կետերի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագրեր կնքելու, բանկային երաշխիքի կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրերի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրերով ստանձնած պարտավորությունները համաձայն «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով Պայմանագրի 7.16 և «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով Պայմանագրի 7.14 կետերի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը միակողմանի լուծել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» և «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրերով Պայմանագրերը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ներկայացվում է համապատասխան հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով սույն ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 30.12.2021թ. կնքվել է թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով, իսկ 09.02.2022թ.՝ թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով գնման պայմանագրեր (հետայսու նաև՝ Պայմանագրեր):

2. Թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հ-6 /Հ-2/-Նոր Գեղի-Եղվարդի տրանսպորտային հանգույց-/Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ 1+600 Հրազդան գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների և Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ23-650 Քասախ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-3 Թուրքիայի հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4-500 Նալբանդի թունելի աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի

նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

4. Պայմանագրերի 7.14-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

5. Պատվիրատուի կողմից 23.02.2022թ. «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղարկվել են համաձայնագրերի նախագծերը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից հաստատված համաձայնագրերը՝ կցելով պայմանագրի ապահովումներ 10%-ի չափով, որակավորման ապահովումներ 15%-ի չափով և կից գրություններ:

6. Պատվիրատուն «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղղված 05.04.2022թ. թիվ ԱԵ/34/7434-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊ ընկերության միջև 30.12.2021 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով կամուրջների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման

պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.16 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 7.16 կետի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հրաժարվում է կնքված Պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ միակողմանի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

7. Պատվիրատուն «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղղված 05.04.2022թ. թիվ ԱԵ/34/7437-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 09.02.2022 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով թունելների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացրել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.14 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով 23.02.2022թ-ին «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով

պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 7.14 կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը միակողմանի լուծում է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով: Հայտնում ենք, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները»:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 08.04.2022թ հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.04.2022թ. թիվ 26/26-1/7133-2022 գրությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 15.04.2022թ. թիվ ԳՍ//9541-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ ***եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ փարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների***

կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: ***Ընդ որում, վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:***

Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 30.12.2021թ. կնքվել է թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով, իսկ 09.02.2022թ.՝ թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով գնման պայմանագրեր:

Թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ 1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հ-6 /Հ-2/-Նոր Գեղի-Եղվարդի տրանսպորտային հանգույց-/Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ 1+600 Հրազդան գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների և Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ23-650 Քասախ գետի վրայի կամուրջի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝

համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Թիվ «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մ-3 Թուրքիայի հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4-500 Նալբանդի թունելի աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականաի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Պայմանագրերի 7.14-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի

17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պատվիրատուի կողմից 23.02.2022թ. «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղարկվել են համաձայնագրերի նախագծերը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից հաստատված համաձայնագրերը՝ կցելով պայմանագրի ապահովումներ 10%-ի չափով, որակավորման ապահովումներ 15%-ի չափով և կից գրություններ:

Պատվիրատուն «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղղված 05.04.2022թ. թիվ ԱԵ/34/7434-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊ ընկերության միջև 30.12.2021 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Ս-2» ծածկագրով կամուրջների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.16 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 7.16 կետի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հրաժարվում է կնքված Պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ միակողմանի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

Պատվիրատուն «Երեք բռունցք» ՍՊԸ-ին ուղղված 05.04.2022թ. թիվ ԱԵ/34/7437-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «Երեք բռունցք» ՍՊԸ-ի միջև 09.02.2022 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով թունելների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կատարողի կողմից ներկայացրել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.14 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով 23.02.2022թ-ին «Երեք բռունցք» ՍՊ ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն «Երեք բռունցք» ՍՊ ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել վերոնշված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 7.14 կետի և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ և 17-րդ ենթակետերի դրույթներով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը միակողմանի լուծում է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս-1» ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու նպատակով: Հայտնում ենք, որ «Երեք բռունցք» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 08.04.2022թ հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

Վերը շարադրված փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությանը ***23.02.2022թ.*** համաձայնագրերի նախագծերը ուղարկված լինելու պայմաններում, ստորագրված համաձայնագրերի, ինչպես նաև բանկային երաշխիքի կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրերի ապահովումներ ներկայացնելու համար ***նախատեսված 15 աշխատանքային օրը հոսել է 24.02.2022թ.-ից և լրացել 16.03.2022թ., մինչդեռ՝ Պատվիրատուն լուծել է Պայմանագրերը 08.04.2022թ., այսինքն՝ միայն 16 աշխատանքային օր անց:***

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Հակառակ դեպքում՝ ժամկետային սահմանապակումները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Երեք բռունցք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.04.2022թ. թիվ 26/26-1/7133-2022 գրությամբ «Երեք բռունցք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**